ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

9 հունիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

72
(3281)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԻՆՉՆ ԷՐ ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱԹՈՒՂԹԸ

Հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ հաղթանակը միայն քաղաքական ուժի հաղթանակ չէր: Սա նաեւ քաղաքական ոճի, քարոզչական մեթոդների, հասարակական տրամադրությունների եւ արժեքային ընտրության հաղթանակ էր: Ընտրությունները ցույց տվեցին, թե ինչն է այսօր առավել ազդեցիկ աշխատում հայկական քաղաքական իրականության մեջ, եւ ինչ ուղերձներ են առավել արդյունավետ հասնում ընտրողին:

ArmLur.am-ը արձանագրել է, որ առաջին հերթին հաղթեց Նիկոլ Փաշինյանը՝ որպես անհատ քաղաքական գործիչ. ոչ այնքան ՔՊ-ն, որքան հենց Փաշինյանը: Քարոզարշավի հիմնական դեմքը նա էր: Ինքն էր խոսում, ինքն էր համոզում, ինքն էր վերցնում քաղաքական հարվածները, ինքն էր դառնում քննադատության գլխավոր թիրախը, ինքն էր մտնում ամենօրյա քաղաքական պայքարի մեջ եւ անմիջական շփվում քաղաքացիների հետ: Քարոզարշավն ամբողջությամբ կառուցված էր նրա անձի շուրջ, եւ արդյունքը ցույց տվեց, որ այդ մարտավարությունն աշխատեց: Հաղթեցին նաեւ Նիկոլ Փաշինյանի աշխատասիրությունն ու քարոզչական հմտությունը: Մինչ բազմաթիվ քաղաքական ուժեր քարոզարշավն սկսում էին օրվա երկրորդ կեսից, Փաշինյանը վաղ առավոտից արդեն մարզերում էր իր ուրախ ավտոբուսով, հանդիպումների մեջ էր, աշխատում էր քաղաքացիների հետ: Անձրեւը, ցուրտը կամ շոգը նրա համար քարոզչությունը դադարեցնելու պատճառ չէին դառնում: Մինչդեռ շատ մրցակիցներ այդ առումով զիջում էին նրան:

ArmLur.am-ը արձանագրում է, որ այս ընտրություններում հաղթեց նաեւ քաղաքական կոշտ, անընդունելի բառապաշարը: Տարիներ շարունակ հանրային ու քաղաքական շրջանակներում քննադատության արժանացած խոսույթը՝ «բռնել», «կզացնել», «պատերով տալ», «ասֆալտին փռել» եւ նմանատիպ արտահայտությունները, ոչ միայն չվնասեցին Փաշինյանի վարկանիշը, այլեւ, փաստորեն, դարձան նրա քաղաքական կապիտալի մի մասը: Ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ հասարակության զգալի հատվածի համար նման հռետորաբանությունը պահանջված է: Սա, թերեւս, այս ընտրությունների ամենաուշագրավ քաղաքական եզրակացություններից մեկն է:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում***



ԱՄՆ-ում բնակվող սիրիահայ գործարար Գաբրիել Չեմբերջյանը դատական կարգով վիճարկում է «ԱՄԻՕ ԲԱՆԿ»-ի (նախկին «Հայբիզնեսբանկ») գործողությունները՝ պնդելով, որ բանկը իր ավանդային միջոցներից 288 մլն 300 հազար դրամ է փոխանցել մեկ այլ անձի՝ Կարինե Ավդալյանի սնանկության գործով հատուկ հաշվին: Դատարանում քննվող գործի շրջանակում Չեմբերջյանը պահանջում է անվավեր ճանաչել դեռեւս 2016 թվականին կնքված «Երրորդ անձի իրավունքի գրավի պայմանագիրը», որը, ըստ էության, դարձել է վիճահարույց փոխանցման հիմքը: Նախ հիշեցնենք, որ Չեմբերջյանն այն գործարարն է, որ Աննա Հակոբյանի հիմնադրամին շռայլ նվիրատվություններ է անում: Նա «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հիմնադիր-նախագահն է: Համաձայն մամուլի հրապարակումների՝ Գաբրիել Չեմբերջյանի մասնակցությամբ ընկերությունը 300 մլն դրամի վնաս է պատճառել պետությանը, եւ հիմա կա քրեական վարույթ: «ՋԼՋ Պրոյեկտ Քոմփանի» ընկերության հիմնադիրների բնակարաններում՝ այդ թվում Գաբրիել Չեմբերջյանի, կատարել էին խուզարկություններ: Հաշվի առնելով գործի հանրային հետաքրքրությունը՝ «Ժողովուրդ» օրաթերթը մի շարք հարցեր էր ուղղել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին՝ պարզելու, թե ինչ հիմքերով է կնքվել վիճարկվող պայմանագիրը, ինչպես է իրականացվել հարյուրավոր միլիոնների փոխանցումը, եւ արդյոք հաշվի տերերը նախապես տեղեկացվել են իրենց միջոցների դուրսգրման մասին:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***



ՀՀԱԺ 9-րդ ընտրությունների արդյունքների նախնական տվյալների համաձայն՝ խորհրդարան են անցնում երեք ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը եւ «Հայաստան» դաշինքը: Ընդդիմադիր ուժ հանդիսացող «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը շեմը չհաղթահարեց ընդամենը 0.004 տոկոսի պակասի պատճառով: Արդյոք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած թվերը համապատասխանում են քաղաքական ուժերի կողմից տեղամասային կենտրոններում աշխատող վստահված անձանց արձանագրած թվերին: Երեք ընդդիմադիր ուժերից ArmLur.am-ին հայտնեցին հետեւյալը. «Հայաստան» դաշինքի պատգամավոր Գեղամ Մանուկյանը հայտնեց, որ դեռ աշխատում են եւ հստակ ոչինչ ասել չեն կարող: «Դեռ տվյալների ճշտում, մշակում է տեղի ունենում»,- ասաց Գեղամ Մանուկյանը: Նրա խոսքով՝ «Հայաստան» դաշինքը բոլոր ընտրատեղամասերում վստահված անձ ունեցել է: Հավելենք, որ այս դաշինքը նաեւ հանձնաժողովի անդամներ, նախագահներ եւ փոխնախագահներ ուներ: «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավորության թեկնածու, մամուլի պատասխանատու Իվետա Տոնոյանի հետ կապ հաստատել չստացվեց: Կուսակցությունից մեզ հայտնեցին, որ նրանք եւս ճշգրտումների փուլում են եւ ավելի ուշ կարող են հստակ պատասխանել:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

Թուրքիան շարունակում է երկխոսությունը Հայաստանի հետ՝ Ադրբեջանի հետ համակարգմամբ: Մենք աջակցում ենք Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացին: Այս մասին Ստամբուլում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը՝ Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի արտաքին գերատեսչությունների ղեկավարների եռակողմ հանդիպումից հետո, հայտնում են ադրբեջանական ՋԼՄ-ները: Նա ընդգծել է, որ Թուրքիան ակնկալում է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության պայմանագրի շուտափույթ ստորագրում՝ առանց որեւէ հապաղման: Նախարարի խոսքով՝ Ադրբեջանի օրինական եւ հիմնավորված մտահոգությունները պետք է փարատվեն: ԱԳՆ ղեկավարը հայտարարել է, որ Թուրքիան կանի հնարավոր ամեն ինչ Հարավային Կովկասում խաղաղություն հաստատելու համար, իսկ կողմերի ցուցաբերած քաղաքական կամքը տարածաշրջանի համար հնարավորությունների կոնկրետ պատուհան է բացել: Նա նաեւ ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ վերջին չորս տարիների ընթացքում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում զգալի առաջընթաց է գրանցվել:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

**ArmLur.am-ը զրուցել է կարգալույծ հռչակված վարդապետ Կորյուն Առաքելյանի հետ: Հիշեցնենք, որ նա կարգալույծ է հռչակվել Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ՝ 2018 թվականին, եկեղեցականին անհարիր վարքագծի եւ հակաքանոնական ընթացքի համար:**

**- Ինչո՞ւ եք այստեղ հավաքվել:**

- Եկել ենք, որովհետեւ արդարության կողմն ենք: Մեր նպատակը եկեղեցու դեմ պայքարելը չէ, այլ եկեղեցին ազատագրել այն մարդկանց ազդեցությունից, ովքեր, մեր համոզմամբ, վնասում են նրան:

**- Ի՞նչ արդարության մասին է խոսքը:**

- Այդ արդարությունը պետք է որոնել եւ գտնել: Մենք կարծում ենք, որ եկեղեցին պետք է վերադառնա իր իրական առաքելությանը եւ ազատ լինի այն երեւույթներից, որոնք վնասում են նրա հեղինակությունն ու առաքելությունը:

**- Նիկոլ Փաշինյանը խոսում է ձեր Վեհափառ հայրապետի մասին: Ի՞նչ կասեք այդ մասին:**

- Ինձ համար նա վաղուց այլեւս Վեհափառ հայրապետ չէ: Ես այդ դիրքորոշումն արտահայտել եմ դեռեւս 2018 թվականին եւ հրապարակավ բարձրաձայնել եմ իմ մտահոգությունները:

**- Ինչպե՞ս եք գնահատում պետության միջամտությունը եկեղեցու գործերին:**

- Պետությունը բոլոր ժամանակներում որոշակի առնչություն է ունեցել եկեղեցու հետ, քանի որ պետական ղեկավարներն էլ եկեղեցու անդամներ են: Սակայն եկեղեցին միշտ պահպանել է իր առաքելությունը, լեզուն, մշակույթն ու ինստիտուտները:

**- Դուք ասում եք, որ եկեղեցու ժառանգությունը վտանգված է: Ինչո՞ւ:**

- Իմ կարծիքով, տարիների ընթացքում ստեղծված եւ պահպանված հոգեւոր ու մշակութային ժառանգությունը մսխվում եւ արժեզրկվում է: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է բարձրաձայնել խնդիրների մասին:

**- Ձեր կարծիքով, ներկայիս Վեհափառը եկեղեցաշինական աշխատանքներ չի՞ կատարել:**

- Իմ համոզմամբ, հիմնական աշխատանքը կատարել են հոգեւորականները, բարերարներն ու նվիրյալ հավատացյալները: Ես նրա գործունեությունը դրական չեմ գնահատում:

**- Եթե այդպես է, ինչո՞ւ մինչեւ 2018 թվականը նրա հետ հոգեւոր ճանապարհ եք անցել:**

- Ես, ինչպես շատ ուրիշներ, ընդունվել եմ հոգեւոր կրթության, ձեռնադրվել եմ եւ ծառայել եկեղեցուն: Երբ համոզվել եմ, որ ընթացքը սխալ է, հրապարակայնորեն արտահայտել եմ իմ անհամաձայնությունը:

**- Հայաստանում գործում են բազմաթիվ կրոնական կազմակերպություններ եւ աղանդներ: Դուք ի՞նչ եք արել դրանց դեմ պայքարելու համար:**

- Իմ ամբողջ ծառայության ընթացքում պայքարել եմ քարոզչությամբ, առաքելությամբ եւ անձնական գործունեությամբ: Նրանք, ովքեր ճանաչում են ինձ եւ հետեւել են իմ գործունեությանը, տեղյակ են այդ աշխատանքի մասին:

*Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՈՎՔԵ՞Ր ՄԱՆԴԱՏ ԿՍՏԱՆԱՆ

**ԿԸՀ-ն ամփոփեց հունիսի 7-ին կայացած ԱԺ ընտրությունների արդյունքները, ըստ որի՝ ՔՊ-ն խորհրդարանում պետք է ունենա 64 պատգամավորական մանդատ: ArmLur.am-ը ներկայացնում է, թե ովքեր են ՔՊ նախընտրական ցուցակի 64 թեկնածուները: Հստակ է, որ նախընտրական ցուցակի մի հատվածը կառավարություն է գնալու, բայց այժմ դեռ որեւէ բան հստակեցված չէ:**

Ներկայացնում ենք, թե ովքեր են ՔՊ նախընտրական ցուցակի 64 համարները:

1. Փաշինյան Նիկոլ (ՀՀ վարչապետ)
2. Միրզոյան Արարատ (ԱԳ նախարար)
3. Ավանեսյան Անահիտ (ՀՀ առողջապահության նախարար)
4. Պապիկյան Սուրեն (ՀՀ ՊՆ նախարար)
5. Պապոյան Գեւորգ (էկոնոմիկայի նախարար)
6. Գալյան Սրբուհի (ՀՀ արդարադատության նախարար)
7. Ռուբինյան Ռուբեն (ԱԺ փոխնախագահ)
8. Ալեքսանյան Վահագն (պատգամավոր)
9. Ղազարյան Ալխաս (պատգամավոր)
10. Հարությունյան Արայիկ Էդուարդի (վարչապետի աշխատակազմի ղեկավար)
11. Կոնջորյան Հայկ (պատգամավոր)
12. Ջուլհակյան Արուսյակ (պատգամավոր)
13. Թորոսյան Արսեն (ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար)
14. Սիմոնյան Ալեն (ԱԺ նախագահ)
15. Մակունց Լիլիթ (վարչապետի խորհրդական)
16. Խուդաթյան Դավիթ (ՏԿԵ նախարար)
17. Պետրոսյան Ռոմանոս (ՀԷՑ ժամանակավոր կառավարիչ)
18. Հակոբյան Հասմիկ (պատգամավոր)
19. Խաչատրյան Արմեն (պատգամավոր)
20. Մկրտչյան Արեն (Լոռու մարզպետ)
21. Մանավազյան Արուսյակ (պատգամավոր)
22. Հովհաննիսյան Արթուր (պատգամավոր)
23. Գաբրիելյան Վիլեն (ՔՊ վարչության անդամ)
24. Ղազարյան Սոնա (պատգամավոր)
25. Եղոյան Արման (պատգամավոր)
26. Սանոսյան Գնել (ՔՊ վարչության անդամ)
27. Բաթոյան Զարուհի (պատգամավոր)
28. Միքայելյան Սասուն (ԵԿՄ նախագահ)
29. Գաբրիելյան Սիսակ (պատգամավոր)
30. Բաղդասարյան Նազելի (վարչապետի մամուլի խոսնակ)
31. Ավինյան Տիգրան (Երեւանի քաղաքապետ)
32. Թունյան Բաբկեն (պատգամավոր)
33. Գասպարյան Տաթեւիկ (պատգամավոր)
34. Լեւոնյան Լեւոն (ՔՊ վերահսկող հանձնաժողովի ղեկավար)
35. Վարդանյան Արաքսյա (ՔՊ-ական)
36. Հայրապետյան Մխիթար (ԲՏԱ նախարար)
37. Հարությունյան Քնարիկ (Գյումրու ավագանու անդամ)
38. Գրիգորյան Նարեկ (պատգամավոր)
39. Դավոյան Արփինե (պատգամավոր)
40. Սիմիդյան Հակոբ (ՔՊ-ական)
41. Սարգսյան Գարիկ (Վեդիի համայնքապետ)
42. Հովհաննիսյան Միլադա (Արմավիրի փոխմարզպետ)
43. Ղալումյան Վահե (պատգամավոր)
44. Մովսիսյան Սերգեյ (Արագածոտնի մարզպետ)
45. Բաղալյան Լուսինե (պատգամավոր)
46. Մինասյան Սարիկ (Գյումրի ՀԷՑ տնօրեն)
47. Բագրատյան Սերգեյ (պատգամավոր)
48. Ղալումյան Հայկ (Տավուշի մարզպետ)
49. Հակոբյան Վաղարշակ (պատգամավոր)
50. Մինասյան Լիլիթ (պատգամավոր)
51. Խանդանյան Սարգիս (պատգամավոր)
52. Հովհաննիսյան Վահե (Ֆինանսների նախարար)
53. Պողոսյան Մարիամ (պատգամավոր)
54. Մաթեւոսյան Համբարձում (Շրջակա միջավայրի նախարար)
55. Խաչատրյան Միքայել (ՔՊ վերահսկող հանձնաժողով)
56. Վարդանյան Ծովինար (պատգամավոր)
57. Սարգսյան Տրդատ (պատգամավոր)
58. Խաչատրյան Վահրամ (Արմավիրի մարզպետ)
59. Սինորյան Նատալյա (պատգամավորի օգնական)
60. Սափեյան Տավրոս (Թալինի համայնքապետ)
61. Գյուլնազարյան Լյուդվիգ (ՔՊ-ական)
62. Ղազարյան Թագուհի (պատգամավոր)
63. Քոչարյան Անդրանիկ (պատգամավոր)
64. Հովհաննիսյան Սուրեն (ՔՊ-ական

Ըստ «Ուժեղ Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակի՝ պատգամավորական մանդատ ստացող 28 թեկնածուներն են՝

1. Նարեկ Կարապետյան,
2. Արամ Վարդեւանյան,
3. Գոհար Նելոյան,
4. Դավիթ Ղազինյան,
5. Ռուբեն Մխիթարյան,
6. Արեգա Հովսեփյան,
7. Մամիկոն Ասլանյան,
8. Ավետիս Առաքելյան,
9. Մարիաննա Ղահրամանյան,
10. Հայկ Սուքիասյան,
11. Արգիշտի Դարբինյան,
12. Իրինա Յոլյան,
13. Էդգար Ղազարյան,
14. Տիգրան Աբրահամյան,
15. Լենա Մաթեւոսյան,
16. Անդրանիկ Գեւորգյան,
17. Հայկ Ֆարմանյան,
18. Լիլիա Շուշանյան,
19. Գրիշա Թամրազյան,
20. Արթուր Դանիելյան,
21. Լիանա Գասպարյան,
22. Վաղինակ Վարդանով,
23. Գառնիկ Դավթյան,
24. Լիանա Մանուկյան,
25. Հարություն Մնացականյան,
26. Վրույր Այվազյան,
27. Սյուզաննա Ավետիսյան,
28. Հարություն Հարությունյան:

«Հայաստան» դաշինքը կունենա 11 մանդատ՝

Ռոբերտ Քոչարյան (հնարավոր է հրաժարվի մանդատից),
Իշխան Սաղաթելյան,
Աննա Գրիգորյան,
Սեւակ Խաչատրյան,
Արթուր Խաչատրյան,
Քրիստինե Վարդանյան,
Աղվան Վարդանյան,
Գեղամ Մանուկյան,
Ագնեսա Խամոյան,
Լեւոն Քոչարյան,
Արթուր Սարգսյան (գտնվում է տնային կալանքի տակ):

Եթե Ռոբերտ Քոչարյանը հրաժարվի մանդատից, ապա պատգամավորական մանդատ կստանա Լիլիթ Գալստյանը:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

## ԼՌՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Ընտրություններից հետո ընդդիմադիր ճամբարում պահպանվող լռությունը պատահական չէ: Եթե իշխանական թիմը գրեթե անմիջապես անցել է հետընտրական քաղաքական օրակարգի ձեւավորմանը, ապա ընդդիմադիր ուժերը, ըստ ամենայնի, դեռեւս զբաղված են արդյունքների, հետագա քայլերի եւ քաղաքական ռազմավարության վերանայմամբ: Այս օրերին ընդդիմադիր շրջանակներում հիմնականում վերլուծում են տեղի ունեցածը, հաշվարկում հնարավոր զարգացումները եւ քննարկում հետագա անելիքները: Լռությունը, փաստորեն, պայմանավորված է ոչ թե պասիվությամբ, այլ ներքին ակտիվ քննարկումներով: Մինչ այդ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը մի քանի անգամ արդեն հրապարակային հայտարարել է, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանը, «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանը եւ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը պետք է կալանավորվեն: Վարչապետը նույն միտքը կրկնել է նաեւ երեկ առավոտյան՝ վերահաստատելով իր քաղաքական գնահատականը: Այս ֆոնին ArmLur.am-ի տեղեկություններով՝ ընդդիմադիր ուժերի ներսում քննարկվում է նաեւ առավել կտրուկ քաղաքական քայլի տարբերակը՝ խորհրդարանական մանդատները չվերցնելը: Քննարկումների մասնակիցների մի մասի տրամաբանությունը հետեւյալն է. եթե իշխանությունը ստացել է խորհրդարանական մեծամասնություն, ապա պետք է կրի նաեւ երկրի կառավարման ամբողջական քաղաքական պատասխանատվությունը: ArmLur.am-ի տեղեկություններով՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներսում այս հարցի շուրջ միանշանակ մոտեցում չկա: Կան ցուցակով անցած թեկնածուներ, որոնք կողմ են խորհրդարան գնալուն եւ պատգամավորական աշխատանք ծավալելուն՝ համարելով, որ ընդդիմադիր գործունեությունը պետք է շարունակվի նաեւ օրենսդիր մարմնում՝ պայքարելով ներսից: Սակայն կուսակցության ղեկավար մակարդակում առավել կոշտ տրամադրություններ են գերակշռում: Մասնավորապես, Սամվել Կարապետյանի շրջապատում ավելի հակված են մանդատներից հրաժարվելու տարբերակին՝ այն դիտարկելով որպես քաղաքական գնահատական եւ հետընտրական իրավիճակին տրվող պատասխան:

Նմանատիպ տրամադրություններ, ըստ մեր տեղեկությունների, առկա են նաեւ «Հայաստան» դաշինքում: Դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանի մոտեցումը եւս գնահատվում է կտրուկ եւ հետեւողական. մանդատներից պետք է հրաժարվել:

Այսպիսով, քաղաքական դաշտում ընթանում են ինտենսիվ խորհրդակցություններ, որոնց արդյունքները կարող են էական ազդեցություն ունենալ նոր ձեւավորվելիք խորհրդարանի աշխատանքի եւ ընդհանրապես հետընտրական քաղաքական գործընթացների վրա: Ի դեպ, Նիկոլ Փաշինյանի կուսակցությունը լեգիտիմության խնդիր չի ունենալու, քանի որ սահմանադրական կարգավորումների համաձայն՝ ՔՊ-ն ձեւավորում է Ազգային Ժողովը եւ խորհրդարանում խնդիր չի ունենա: Պարզապես ապագա խորհրդարանը կլինի միակուսակցական:

*Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան շնորհավորել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին 2026թ. խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության արձանագրած հաղթանակի առիթով, որում ասված է. «Հայ ժողովուրդը քվեարկել է խաղաղության, կայունության եւ հարեւանների ու աշխարհի հետ ավելի ամուր համագործակցության վրա կառուցված ապագայի համար: Շնորհավորում եմ Նիկոլ Փաշինյանին ընտրությունների արդյունքների առիթով: Դուք կարող եք հպարտանալ Ձեր դերով Հայաստանի դիմադրողականության, կայունության եւ բարգավաճման ամրապնդման գործում: Միասին ԵՄ-ն եւ Հայաստանը կառուցում են ավելի ամուր կապեր մարդկանց միջեւ եւ ստեղծում նոր հնարավորություններ էներգետիկայի, առեւտրի եւ թվայնացման ոլորտներում: Մեր ամուր գործընկերությունը ներդրում է ավելի խաղաղ եւ բարգավաճ ապագայի մեջ ամբողջ տարածաշրջանի համար»:

## ՄԱԿՐՈՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը X-ի իր էջում շնորհավորել է Նիկոլ Փաշինյանին՝ խորհրդարանական ընտրություններում նրա կուսակցության հաջողության կապակցությամբ: «Իմ ամենաջերմ շնորհավորանքները, թանկագին Նիկոլ Փաշինյան, խորհրդարանական ընտրություններում այս համոզիչ հաղթանակի կապակցությամբ: Ուրախ եմ քո կողքին շարունակել մեր սկսած աշխատանքը՝ էլ ավելի ամրապնդելու մեր համագործակցությունը՝ ի նպաստ մեր ժողովուրդների, սատարելու Հայաստանի խաղաղությանն ու ինքնիշխանությանը եւ աջակցելու Եվրոպայի հետ մերձեցման դինամիկային»,- գրել է Մակրոնը:

## ԷՍՏՈՆԻԱՆ ՀՊԱՐՏ Է ԱՋԱԿՑԵԼ

Էստոնիայի վարչապետ Քրիստեն Միխալը շնորհավորել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին 2026թ. խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության արձանագրած հաղթանակի առիթով, որում նշված է. «Շնորհավորում եմ, վարչապետ Նիկոլ Փաշինյան, ընտրություններում Ձեր հաղթանակի առիթով: Հայաստանը շարունակում է ընտրել Եվրոպան, եւ Էստոնիան հպարտ է աջակցել Ձեր եվրոպական ձգտումներին: Ես անհամբեր սպասում եմ համատեղ աշխատանքին՝ բարեփոխումների, նորարարության եւ ավելի անվտանգ Եվրոպայի շուրջ՝ միաժամանակ կառուցելով մեր երկրների միջեւ էլ ավելի ամուր գործընկերություն»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# ԻՆՉՊԵ՞Ս Է ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

**Ռուսական պետական եւ խոշոր լրատվամիջոցները լայնորեն անդրադարձել են Հայաստանում հունիսի 7-ի ԱԺ ընտրությունների նախնական արդյունքներին՝ դրանք ներկայացնելով թե՛ քաղաքական, թե՛ գործընթացային քննադատական դիտարկումներով:**

ArmLur.am-ը փորձել է պարզել, թե ընդհանուր առմամբ, ինչ քողի ներքո են ռուսական մամուլում մեկնաբանվել ՀՀ ԱԺ ընտրությունները: Ըստ ՏԱՍՍ-ի եւ РИА Новости-ի հրապարակումների՝ ընտրությունների նախնական արդյունքներով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է մոտ 49.8% ձայն, ինչը թույլ չի տալիս ինքնուրույն ձեւավորել կառավարություն առանց մանդատների վերաբաշխման: Միեւնույն ժամանակ նշվում է, որ երկրորդ տեղում է «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝ շուրջ 23.28%, իսկ երրորդը՝ «Հայաստան» դաշինքը՝ մոտ 9.93%: Գործարար Գագիկ Ծառուկյանի գլխավորած «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը չի հաղթահարել անցողիկ շեմը՝ հավաքելով մոտ 3.99%: Ռուսական մամուլում առավել ընդգծված են կոնկրետ գնահատականներն ու մեղադրական ձեւակերպումները, այլ ոչ միայն ընդհանուր քաղաքական վերլուծությունը.

**Ընտրական գործընթացի բարդացում եւ տեխնիկական խնդիրներ**

РИА Новости-ն եւ այլ աղբյուրներ մեջբերում են ռուս դիտորդների (մասնավորապես Ռուսաստանի ԿԸՀ ներկայացուցիչ Լյուդմիլա Մարկինայի) հայտարարությունները, ըստ որոնց՝ քվեարկության եւ հաշվարկի ընթացակարգերը «անհիմն կերպով բարդացված են», ինչի հետեւանքով ընտրական հանձնաժողովների անդամները «շփոթվել են ձայների հաշվարկի եւ արձանագրությունների լրացման ընթացքում»:

**Կոնկրետ դիտարկումներ խախտումների մասին**

Ռուսական մամուլում՝ հատկապես դիտորդների եւ ընդդիմադիր կողմի մեկնաբանություններում, հիշատակվում են մի շարք դեպքեր, որոնք ներկայացվում են որպես համակարգային խախտումներ.

«ընտրական կարուսել» (կրկնակի քվեարկության մեխանիզմներ),

քվեաթերթիկների դուրսբերում ընտրատեղամասերից,

բաց քվեարկության դեպքեր,

զինծառայողների խմբային քվեարկություն,

ընտրացուցակների անհամապատասխանություններ (օրինակ՝ մեկ հասցեում չափազանց մեծ թվով գրանցված անձինք):

**Ձերբակալություններ եւ քաղաքական ճնշման մասին պնդումներ**

Ռուսական աղբյուրներում նշվում է, որ ընտրարշավի ընթացքում եւ քվեարկության օրերին եղել են ընդդիմադիրների ձերբակալություններ: Այդ ֆոնը օգտագործվում է որպես փաստարկ, որ ընտրական մրցակցությունը եղել է «ոչ հավասար պայմաններում»:

**Պաշտոնական ռուսական քաղաքական գնահատականներ**

ՌԴ բարձրաստիճան պաշտոնյաների արձագանքները նույնպես մեջբերվում են ռուսական մամուլում:

Դմիտրի Մեդվեդեւը նշել է, որ ընտրությունները, որտեղ, ըստ նրա, փորձ է արվում «չեզոքացնել մրցակիցներին», դժվար է լիովին լեգիտիմ համարել:

Մարիա Զախարովան հայտարարել է, որ ընտրարշավը չի եղել դասական ժողովրդավարական մրցակցություն, այլ ավելի շատ՝ «պայքար ժողովրդավարական ընթացակարգերի դեմ»:

Այսպիսով, ռուսական մամուլը ՀՀ ԱԺ հերթական ընտրությունների վերաբերյալ շեշտադրում է ոչ միայն արդյունքների ներկայացումը, այլեւ այն ընկալումը, որ ընտրական գործընթացը ուղեկցվել է համակարգային խնդիրներով եւ վիճարկվող լեգիտիմության շուրջ քննարկումներով, ինչը ձեւավորում է նրանց հիմնական մեկնաբանությունների առանցքը:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԿԱՐՈՂ Է ԸՆԴԼԱՅՆԵԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Ռուսաստանը կընդլայնի Հայաստանից ձկան մատակարարումների սահմանափակումները անասնաբուժական ռիսկերի առաջացման դեպքում, Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովի շրջանակներում լրագրողներին հայտարարել է Ձկնաբուծության դաշնային գործակալության ղեկավար Իլյա Շեստակովը, հաղորդում է ՏԱՍՍ-ը: «Ռուսաստանն արդեն սահմանափակումներ է մտցրել Հայաստանից կենդանի ձկան մատակարարումների նկատմամբ: Եթե հայտնաբերվեն գործոններ, որոնց դեպքում կարող են առաջանալ անասնաբուժական ռիսկեր, եւ որոնց առկայությամբ այդ ձուկը մատակարարվելիս կազդի մեր անասնաբուժական անվտանգության վրա, անշուշտ, հետագա քայլեր նույնպես կլինեն»,-ասել է Շեստակովը: Նա նշել է, որ բացի կենդանի ձկից, Հայաստանից Ռուսաստան է մատակարարվում նաեւ սառեցված ձուկ: «Իշխանի մատակարարումների տեսանկյունից Հայաստան ներմուծման մեջ բավականին մեծ ծավալ էր զբաղեցնում: Եթե խոսենք ներքին շուկայի հագեցվածության մասին, ապա դա, անշուշտ, որեւէ կերպ չի ազդի: Մենք ունենք իշխանի սեփական արտադրության բավարար ծավալ: Բացի այդ, ներմուծումը կփոխարինվի այլ երկրներով, այդ թվում՝ Թուրքիայով»,- հավելել է գերատեսչության ղեկավարը:

## ՆՇՎԱԾ Է 1 ՁԱՅՆ

ԲՀԿ խոսնակ Իվետա Տոնոյանը գրում է. «Մի քանի ժամ առաջ տեղեկացրել էի, որ ԲՀԿ-ն մի շարք ընտրատեղամասերում սկսել է վերահաշվարկի գործընթաց: Տարբեր տեղամասերից ստացված տեղեկատվության համադրմամբ արձանագրել ենք հետեւյալ պատկերը՝ 27/7 ընտրատեղամասում հանձնաժողովի արձանագրության համաձայն՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ստացել է 77 ձայն, մինչդեռ ԿԸՀ կայքում նշված է 1 ձայն: 12/20 ընտրատեղամասում արձանագրության համաձայն՝ ԲՀԿ-ի օգտին քվեարկել է 26 ընտրող, իսկ ԿԸՀ կայքում նշված է 1 ձայն: 27/26 ընտրատեղամասում արձանագրության համաձայն՝ ԲՀԿ-ն ստացել է 19 ձայն, ԿԸՀ կայքում՝ 3 ձայն: 37/53 ընտրատեղամասում արձանագրության համաձայն՝ ԲՀԿ-ն ստացել է 7 ձայն, ԿԸՀ կայքում՝ 4 ձայն: Սրանք անհերքելի փաստեր են, յուրաքանչյուր ոք կարող է ԿԸՀ-ի կայքում տեսնել այս անհամապատասխանությունները: Փաստերն աշխատանքային ռեժիմով ներկայացվել են ԿԸՀ, եւ տվյալները փոփոխման փուլում են: Մենք շարունակում ենք տարբեր ընտրատեղամասերի հետ կապված նորանոր արձանագրումներ կատարել եւ առաջիկայում հանդես կգանք համապատասխան թարմացումներով»:

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ

Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը շնորհավորական ուղերձ է հղել Նիկոլ Փաշինյանին՝ խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հաղթանակի կապակցությամբ: Իր ուղերձում Տոկաեւը նշել է, որ, ըստ միջազգային դիտորդների մեծամասնության նախնական տվյալների, Հայաստանում ընտրական գործընթացն անցել է բաց, երկրի գործող օրենսդրությանը լիովին համապատասխան եւ քաղաքացիների ազատ կամարտահայտման համար անհրաժեշտ բոլոր պայմանների ապահովմամբ: Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը Նիկոլ Փաշինյանին մաղթել է հետագա հաջող աշխատանք՝ ուղղված Հայաստանի երկարաժամկետ ազգային շահերի իրականացմանը: «Ղազախստանը պատրաստ է շարունակել ակտիվ համագործակցությունը բարեկամ Հայաստանի հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում»,- ընդգծել է Տոկաեւը:

ՈՐՈՇՈՒՄ

# ՔՊ ԿԱՌՈՒՅՑԻ ԱՆԴԱՄԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

**Որոշում է կայացվել «Քաղաքացիական դայմանագիր» կուսակցության Դավթաշեն տարածքային կառույցի անդամ 33-ամյա Շմավոն Աթոյանի սպանության գործով:**




Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քրեական վարույթով նախաքննության ավարտ է հայտարարվել: ArmLur.am-ի բացառիկ տեղեկություններով՝ սպանության պատճառը եղել է աղջկա հետ կապված հարց. վերջինիս նեղացնելու դեպքը ստեղծել է լարվածություն, ինչի հետեւանքով էլ հնչել է կրակոց, եւ սպանվել է 33-ամյա երիտասարդը:

ՆԳՆ-ն պաշտոնապես հայտնել է, որ 2025 թվականի հոկտեմբերի 25-ին՝ կեսգիշերից անց, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից Քրեական ոստիկանության Երեւանի քաղաքային վարչություն հաղորդում է ստացվել, որ Դավթաշենի երրորդ թաղամասում վիճաբանություն է եղել: Նշված վայր է մեկնել օպերատիվ խումբ: Մինչ իրավապահները ձեռնարկում էին անհետաձգելի գործողություններ՝ «Արմենիա» բժշկական կենտրոնից հաղորդվել է, որ հրազենային վիրավորումով բուժօգնության տեղափոխված 33-ամյա Շմավոն Աթոյանը, գիտակցության չգալով, մահացել է:

Բացահայտման աշխատանքներին միացել են նաեւ Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները: Դեպքի վայրում հայտնաբերվել է 9 մմ տրամաչափի կրակված մեկ փամփուշտ: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

Այժմ գործը դատարանում է, եւ կան մեղադրյալներ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՎՏՈՎԹԱՐ

Հունիսի 7-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում: Ժամը 13:50-ի սահմաններում «ՎԱԶ 2101» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Երասխ-Մեղրի ավտոճանապարհի 117 կմ հատվածում դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել ծառերին: Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով 1 հոգի տեղում մահացել է, 1 հոգի, ում առաջինն օգնության են հասել քաղաքացիները եւ ըստ քաղաքացիների հայտնածի՝ օպերատիվորեն ժամանած «Վայոց ձոր» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը, տեղափոխվել է «Վայոց ձոր» բժշկական կենտրոն: Օպերատիվորեն ժամանել են ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Պարեկային ծառայության Վայոց ձորի մարզի գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Կարապետ Հարությունյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Աբել Վարդանյանի եւ վաշտի հրամանատար Գեւորգ Գյուրջյանի գլխավորությամբ: Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկներ Արման Հովհաննիսյանն ու Արթուր Պողոսյանը: Վթարի մասին ՊԾ Վայոց ձորի մարզի գումարտակից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչություն, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ վարչության պետ Արմինե Գեւորգյանի, վարչության պետի տեղակալ Գոռ Թովմասյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:- Մինչ դեպքի վայրում աշխատում էին պարեկները հիվանդանոցից ահազանգ է ստացվում ոստիկանության Եղեգնաձորի բաժին, որ հիվանդանոց տեղափոխված տղամարդը գիտակցության չգալով մահացել է:Վթարի փաստով քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են ավտոմեքենայի սեփականատիրոջ, վարորդի եւ մահացածների ինքնությունը: Քննիչի հանձնարարականով ավտոմեքենան տեղափոխվում է ոստիկանության Եղեգնաձորի բաժնի պահպանվող հատուկ տարածք: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ մահացածները հայր ու որդի են:

## ՎՐԱԵՐԹ

Հունիսի 5-ին՝ ժամը 15.40-ի սահմաններում, ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ներքին Չարբախ 7-րդ փողոցում վիճաբանություն է: Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ոստիկանության օպերատիվ խմբեր: Ահազանգից կարճ ժամանակ անց Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժնում մի տղամարդ հաղորդում է տվել, որ իրեն են մոտեցել քաղաքական ուժերից մեկի աջակիցները, առաջարկել նախընտրական ծրագրի բուկլետ, նա հրաժարվել է վերցնել, ինչից հետո սկսվել է վիճաբանություն եւ նրան հարվածներ են հասցրել: Նա մեքենայով փորձել է դիմել փախուստի, ինչի ընթացքում վրաերթ է տեղի ունեցել: Համայնքային ոստիկանության բաժնում տղամարդը հայտնել է նաեւ, որ չի հարում որեւէ քաղաքական ուժի: ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել նաեւ բժշկական կենտրոններից մեկից: Հայտնել են, որ վնասվածքներով իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել մեկ անձ: Իրականացվում են ստուգողական գործողություններ: Այս պահին ստացված հաղորդումները փոխանցվում են նախաքննական մարմին:

## ԱՆՀԱՄԱՐԺԵՔ ՎԱՐՔ

Լոռու մարզի Մեծավան համայնքի ընտրատեղամասերից մեկում 35-ամյա մի քաղաքացի, որը գտնվել է ակնհայտ ոչ սթափ վիճակում, դրսեւորել է անհամարժեք վարք: Հանձնաժողովի նախագահի կողմից ոստիկաններին դիմելուց հետո անձն ընտրատեղամասից դուրս է հրավիրվել: Ավելի ուշ՝ ժամը 16:45-ի սահմաններում, նույն անձը վերադարձել եւ փորձել է ներս մտնել: Ոստիկանները նրան թույլ չեն տվել կրկին մտնել ընտրատեղամաս, սակայն 35-ամյա տղամարդը հայհոյանքներ է հնչեցրել քաղաքացիների եւ ոստիկանների հասցեին, միջամտել է ոստիկանների օրինական ծառայողական գործունեությանը: Ոստիկանները կանխել են խուլիգանական դրսեւորումները: Խուլիգանության եւ պաշտոնատար անձի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու հատկանիշներով կազմված փաստաթղթերն ուղարկվել են Քննչական կոմիտե:

## ԱՀԱՋԱՆԳ

Հունիսի 7-ին Ներքին գործերի նախարարությունում ստացվել է ահազանգ, որ Գյումրիի մի ընտրատեղամասի դիմաց քաղաքական ուժերից մեկի շտաբի ներկայացուցիչները ընտրակաշառք են բաժանում: ՆԳՆ ոստիկանության օպերատիվ խմբերն անմիջապես մեկնել են նշված հասցե եւ ընտրակաշառք տալու կասկածանքով ձերբակալել եւ Քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչություն են տեղափոխել երեք անձի: Հայտնաբերվել են ընտրողների ցուցակներ: Հանգամանքները պարզվում են:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

## ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

«Շանթ»-ի հետ զրույցում ընտրությունների առիթով Երեւան ժամանած Հովհաննես Սահակյանը հայտնել էր, որ Մոսկվայից եկել են մասնակցելու քվեարկությանը եւ նույն օրը պատրաստվում են վերադառնալ: «Մոսկվայից եկել ենք ընտրենք, երեկոյան 7-ին հետ ենք վերադառնում»,- ասել էր նա: Լրագրողի՝ «Նո՞ւյն օրը» հարցին արձագանքելով՝ Սահակյանը նշել էր. «Անպայման, որ կարող ա խառնվի վիճակը, երեխեքի հետ ենք, չմնանք էլի բարդություններին»: Ավելի ուշ, երբ Սահակյանը փորձել է վերադառնալ Մոսկվա, հենց օդանավակայանում ձերբակալվել է: ArmLur.am-ի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնել են, որ կոմիտեում ստացված առերեւույթ հանցանքի մասին հաղորդման համաձայն՝ Հ. Ս.-ն, ըստ նախնական տվյալների, տեղեկացված լինելով նախապատրաստվող հանցագործության մասին, այդ մասին չի հայտնել ՀՀ իրավասու մարմիններին: Հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 473-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (հանցագործության մասին չհայտնելը): Քննիչի որոշմամբ Հ. Ս.-ն ձերբակալվել է: Նախաքննությունը շարունակվում է:

## ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է

Հունիսի 7-ին ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն բժշկական կենտրոններից մեկից ահազանգ է ստացվել, որ ժամը 19:55-ին կտրածական վերքերով բուժօգնության է տեղափոխել 27-ամյա մի երիտասարդ: Արտաշիսյան փողոց մեկնած Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժնի եւ Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները պարզել են, որ, ըստ նախնական տեղեկությունների, մեքենան արագ վարելու հարցի շուրջ վիճաբանություն է տեղի ունեցել մի խումբ անձանց միջեւ, ինչի ընթացքում նրանից մեկը դանակահարել է 27-ամյա երիտասարդին: Ոստիկանների օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզվել է նաեւ, որ դանակահարողը Երեւանի 16-ամյա բնակիչ է: Դանակահարության մեջ կասկածվող անձը եւ միջադեպի մասնակիցները հայտնաբերվել եւ ձերբակալվել են: Դեպքից որոշ ժամանակ անց ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ բժշկական կենտրոն տեղափոխված 27-ամյա երիտասարդը մահացել է: Դեպքի հանգամանքները պարզվում են: Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ հունիսի 4-ից 5-ը բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման 15 դեպք:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

## ՄԻ ԿԵՐՊ ՔԱՅԼՈՂ ԾԵՐԵՐ

Հունիսի 7-ին իմ հայրենի Նոյեմբերյան քաղաքում որպես լրագրող հետեւում էի խորհրդարանական ընտրությունների ընթացքին: Երեւում էր, որ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը, հատկապես իշխող ՔՊ կուսակցությունը կազմակերպչական մեծ աշխատանք էր կատարել քվեարկությանը ընտրողների մասնակցությունը ապահովելու համար: Ընդդիմադիր քաղաքական ուժերի տեղացի վստահված անձինք դեմքով լավ են ճանաչում նոյեմբերյանցի ընտրողներին: Այդ վստահված անձինք լրագրողիս հայտնեցին, որ վաղ առավոտից գերազանցիկ աշակերտի պարտաճանաչությամբ քվեարկությանը մասնակցել են գերազանցապես ՔՊ-ի համակիր ընտրողները: Լինելով ընտրական տեղամասերում՝ տեսա, թե ինչպես քվեարկությանը մասնակցում էին քայլակով, ձեռնափայտերով հազիվ քայլող ծերեր, կոտրված ոտքը գիպսի մեջ մարդիկ, նաեւ փոքրիկ երեխաները գրկին մայրեր: Կային բազում ծերեր, մտավոր խնդիրներ ունեցողներ, որոնց հետ ընտրատեղամաս եկած ընտանիքի անդամն էր օգնում քվեարկել: Որոշ ընտրողներ չգիտեին ընտրության կարգը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին հարցնում էին՝ ինչու քվեատուփի մոտ գրիչ չկա, որ իրենք քվեաթերթիկի վրա համապատասխան գրառում կատարեն:

Նոյեմբերյան քաղաքի մշակույթի տանը տեղակայված 37/1 ընտրական տեղամասի առաջ առավոտյան ժամը 8-ից մինչեւ ժամը 14-ն ընտրողների հերթեր էին, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները դժվարությամբ էին կարգավորում հերթը, զսպում ընտրական տեղամաս շտապող ընտրողների մուտքը: Այդ հերթերը կարգավորելու համար ժամանել ու ցուցումներ էր տալիս թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Արկադի Հարությունյանը: Բացի ընտրական տեղամասերի մոտ մարդկանց անհարկի կուտակումները՝ Տավուշի մարզի թիվ 37 ընտրատարածքում ընտրական օրենսդրության էական խախտումներ չեղան: Տեղեկություններ ստացվեցին, որ ձերբակալվել են Վրաստանին սահմանակից Դեբեդավան գյուղի 4 բնակիչ, այդ թվում՝ Դեբեդավանի վարչական ղեկավար Գեւորգ Սարգսյանը: Տավուշի մարզում ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունեցավ այն, որ սահմանագոտում պետական աջակցությամբ, վարկային միջոցներով, 16 եւ 21 միլիոն դրամ արժեքով Տավուշի մարզում հաստատված է 1931 առանձնատան կառուցումը:

Հունիսի 7-ի ԱԺ ընտրություններում Նոյեմբերյանի սահմանամերձ գյուղերում ՔՊ կուսակցությունը մեծ առավելությամբ հաղթեց: Դա այն դեպքում, որ ԽՍՀՄ ժամանակ ադրբեջանաբնակ անկլավ Վերին Ոսկեպար գյուղի տարածքը առաջիկայում սահմանազատման գործընթացի շարունակությամբ Ադրբեջանին հանձնելու դեպքում Ոսկեպար գյուղը կարող է հայտնվել ադրբեջանական շրջափակման մեջ, կխաթարվի Նոյեմբերյանի տարածաշրջանի կապը Տավուշի մարզկենտրոն Իջեւանի հետ:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

ՏՎՅԱԼՆԵՐ

## 17 ՀԱԶԱՐԻՑ ԱՎԵԼԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ՝ ԱՆՎԱՎԵՐ

**Հայաստանում անցկացված 2026 թվականի հունիսի 7-ի Ազգային Ժողովի ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ հրապարակվել է նախնական արձանագրություն: Ազգային Ժողովի ընտրությունների տվյալները ներկայացրել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:**

Ըստ արձանագրության՝ ընտրողների ցուցակներում ընդգրկված քաղաքացիների ընդհանուր թիվը կազմել է 2,503,981, իսկ լրացուցիչ ցուցակներով, շրջիկ արկղերով եւ էլեկտրոնային քվեարկությամբ ընդհանուր ընտրողների թիվը հասել է 2,507,216-ի:

Քվեարկությանը մասնակցել է ընդհանուր 1,477,736 քաղաքացի, ինչը մոտավորապես կազմում է 58.9% մասնակցություն:

Տեղամասային հանձնաժողովներին հատկացվել է՝

ինքնասոսնձվող դրոշմանիշներ՝2,605,100,

ընտրական կտրոնների ընդհանուր թիվ՝ 2,040,000,

տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոններ՝2,368,

ընտրողներից ստացված ընդհանուր կտրոններ՝1,476,409,

չօգտագործված համարակալված կտրոններ՝201,123,

չօգտագործված դրոշմանիշներ՝1,128,918:

Անվավեր քվեաթերթիկների թիվը կազմել է 17,097:

Քվեարկության արդյունքներ՝ կուսակցությունների կտրվածքով

Ըստ ԿԸՀ-ի հրապարակած տվյալների՝ կուսակցությունները ստացել են հետեւյալ ձայները.

«Ռեֆորմիստների կուսակցություն» - 1,456

«Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցություն - 21,477

«Ուժեղ Հայաստան դաշինք» - 340,088

«Հայաստանի շնորպետական կուսակցություն» - 30,807

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն - 25,624

«Միասնության թեւեր» կուսակցություն - 33,644

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն - 58,378

«Ազգային-ժողովրդավարական բեւեռ» համահայկական կուսակցություն - 5,485

«Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցություն - 1,984

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն - 3,206

«Հանրապետություն» կուսակցություն - 15,835

Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն - 2,679

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն - 5,284

«Դեմոկրատիա օրենք կարգապահություն» կուսակցություն - 26,567

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 727,820

«Հայաստան դաշինք» - 145,113

«Հանուն Հանրապետության» ժողովրդավարության պաշտպանների դաշինք - 6,750

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն - 7,258

ԿԸՀ-ի արձանագրությունը համարվում է ընտրությունների արդյունքների նախնական ամփոփում, որը հետագայում կարող է ենթարկվել ճշգրտումների:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ԱՇԽԱՐՀ

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ երկխոսությունը շարունակում է մնալ ակտիվ եւ բազմակողմ, հայտարարել է Կիրիլ Դմիտրիեւը՝ Ռուսաստանի նախագահի ներդրումների եւ միջազգային տնտեսական համագործակցության հարցերով հատուկ ներկայացուցիչը եւ Ռուսաստանի ուղղակի ներդրումների հիմնադրամի ղեկավարը: «Վեստի» հեռուստածրագրին տված հարցազրույցում Դմիտրիեւը նշել է, որ շփումները չեն սահմանափակվում միայն ԱՄՆ նախագահի հատուկ ներկայացուցիչ Սթիվ Ուիտկոֆի եւ ամերիկացի գործարար Ջարեդ Քուշների հետ հանդիպումներով: Նրա խոսքով՝ վերջին շաբաթվա ընթացքում ունեցել է մի շարք զրույցներ Ուիտկոֆի եւ Քուշների հետ, իսկ կապերը շարունակվում են նաեւ այլ մակարդակներում: Դմիտրիեւը նշել է, որ Ռուսաստանի նախագահի միջազգային հարցերով օգնական Յուրի Ուշակովը եւ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը նույնպես մշտական կապի մեջ են ամերիկյան կողմի ներկայացուցիչների հետ: Նա հիշեցրել է նաեւ, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ ԱՄՆ նախագահ Թրամփը պարբերաբար հեռախոսազրույցներ են ունենում: Դմիտրիեւի խոսքով՝ երկխոսության շրջանակում քննարկվում են ոչ միայն քաղաքական եւ տնտեսական, այլեւ մշակութային ու սպորտային հարցեր: Նա հայտնել է, որ ԱՄՆ ներկայացուցիչները, որոնք մասնակցել են Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովին, հնարավորություն են ունեցել ծանոթանալու Մոսկվայի եւ Սանկտ Պետերբուրգի ներկայիս հայեցակարգին ու զարգացման մակարդակին: Ռուս պաշտոնյան նաեւ նշել է, որ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի գործարար շրջանակները քննարկել են հոկեյի ընկերական հանդիպման կազմակերպումը, որը նախատեսվում է անցկացնել հուլիսի 1-ին: Բացի այդ, Դմիտրիեւը հայտնել է, որ Մոսկվայում հանդիպել է ամերիկացի հասարակական գործիչ եւ մեկնաբան Քենդիս Օուենսի հետ: Նրա խոսքով՝ քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել Ռուսաստանի ժամանակակից զարգացմանն ու երկրի մասին արեւմտյան հանրային ընկալումներին: «-Մենք շարունակում ենք երկխոսությունը բազմաթիվ ուղղություններով», - եզրափակել է Դմիտրիեւը:

## ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Ռուսաստանն ու Ուկրաինան իրականացրել են ռազմագերիների հերթական փոխանակումը՝ «185-ը 185-ի դիմաց» ձեւաչափով: Այս մասին հայտնել է Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը: Գերատեսչության տվյալներով՝ Ռուսաստանի վերահսկողությունից դուրս գտնվող տարածքներից վերադարձվել է 185 ռուս զինծառայող, որոնց դիմաց ուկրաինական կողմին է փոխանցվել 185 ուկրաինացի ռազմագերի: Վերադարձված ռուս զինծառայողները ներկայում գտնվում են Բելառուսում, որտեղ նրանց տրամադրվում է անհրաժեշտ հոգեբանական եւ բժշկական աջակցություն: Գործընթացին աջակցում է Ռուսաստանի մարդու իրավունքների հանձնակատար Յանա Լանտրատովան: Ռուսաստանի պաշտպանության նախարարության հաղորդմամբ՝ բուժզննումից եւ անհրաժեշտ օգնություն ստանալուց հետո ազատ արձակված զինծառայողները կտեղափոխվեն Ռուսաստան՝ պաշտպանության նախարարության բուժհաստատություններում հետագա բուժման եւ վերականգնման նպատակով: Գերիների փոխանակման կազմակերպման գործում միջնորդական դեր է ունեցել ԱՄԷ: Սա վերջին շաբաթների ընթացքում կողմերի միջեւ իրականացված երկրորդ խոշոր փոխանակումն է: Ավելի վաղ՝ մայիսի 15-ին, կողմերը փոխանակել էին 205 ռուս եւ 205 ուկրաինացի զինծառայողների: Ռազմագերիների փոխանակումները շարունակում են մնալ ռուս-ուկրաինական պատերազմի ընթացքում կողմերի միջեւ համագործակցության հազվադեպ ուղղություններից մեկը:

● *Հունիսի 4-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 10 հետախուզվող, կամավոր ներկայացել՝2-ը:*

ՄԱՐՔ

## Ե՞ՐԲ ԵԿԵՂԵՑԻ ԿՈՒՆԵՆԱ

Գյուղեր կան, որոնք 2 եկեղեցի ունեն, իսկ զբոսաշրջային քաղաք, ավելի քան 16 հազար բնակիչ ունեցող Դիլիջանում եկեղեցի չկա: Դիլիջան ժամանած տուրիստները զարմանում են, որ քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած Հայաստանի տեսարժան վայրերից մեկում՝ Դիլիջան քաղաքում, եկեղեցի չկա: Ավելի քան մեկուկես տասնամյակ դիլիջանցիների կողմից սիրված, հարգված Տեր Շավարշ քահանա Սիմոնյանը հոգեւոր արարողություններ է կատարում եկեղեցու վերածված, Դիլիջանում Թուֆենկյան համալիրի շենքերից մեկի սենյակում: 2015 թվականից Հայ առաքելական եկեղեցին այդ տարածքը վարձակալում է Թուֆենկյան ընկերությունից, այն ժամանակ այդ տարածքի վարձակալության համար եկեղեցին Թուֆենկյան ընկերությանը ամեն ամիս վճարում էր 90 հազար դրամ: Հավանական է, որ անցած տասնամյակում Դիլիջան քաղաքի կենտրոնում գտնվող այդ տարածքի վարձակալության վճարն ավելացած լինի: 2005 թվականին Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնաթերթ «Դիլիջան» թերթը գրեց, որ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգում բնակվող հայազգի Ջոն Ստիվենսը (Հովհաննես Ստեփանյան) Դիլիջան քաղաքում եկեղեցի կառուցելու համար նվիրաբերել է 1 միլիոն դոլար: Բացի այդ, Դիլիջան համայնքում ստեղծվեց եկեղեցու կառուցմանն օժանդակող հիմնադրամ՝ նպատակ ունենալով եկեղեցու շինարարության համար ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Սակայն շուտով բարեգործ Ստիվենսը մահացավ, Դիլիջանի եկեղեցին էլ չկառուցվեց: Անցավ 10 տարի: 2015թ. հոկտեմբերի 30-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը Դիլիջանում կատարեց հողօրհնեքի արարողություն, որով տրվեց եկեղեցու կառուցման ծրագրի մեկնարկը: Այդ միջոցառման ժամանակ հայտարարվեց, որ Դիլիջան քաղաքում եկեղեցին կառուցվելու է Սուրբ Էջմիածնի, Դիլիջանի քաղաքապետարանի, Հայաստանի զարգացման հիմնադրամի համատեղ ջանքերով, Ռուբեն Վարդանյանի եւ Գագիկ Ադիբեկյանի բարերարությամբ: Այժմ Դիլիջան գեղատեսիլ վայրերից մեկում եկեղեցու շինարարության մեծ մասն արված է, դեռ պետք է գմբեթի կառուցման, եկեղեցու ներքին հարդարման աշխատանքներն արվեն: 2025 թվականին Դիլիջանի համայնքապետարանի կողմից հիմնանորոգվել է քաղաքի Շամախյան թաղամասի մշակութային կենտրոնը, հանրային գրադարանը եւ մեծահասակների ժամանցի սենյակը: Վերանորոգված մշակութային կենտրոնի շենքի հետեւում գտնվում է ժամանակի ընթացքում ավերակ դարձող, քանդվող եկեղեցի: Այդ եկեղեցին գրավոր աղբյուրներում հիշատակվում է որպես Սուրբ Աստվածածին, իսկ ուշ շրջանի մատյաններում՝ նաեւ Սուրբ Պողոս: Եկեղեցու կառուցման ստույգ տարեթիվը չի հիշատակվում: Դիլիջանի բնակիչներն ասում են՝ բարեգործների միջոցով, դրամական նվիրատվություններով պետք է իրականացնել Շամախյան թաղամասի Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնանորոգումը, այն դարձնել գործող հոգեւոր օջախ:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

ՖԱՍԹ ԲԱՆԿ

Գ

# ՖԱՍԹ ԲԱՆԿԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԵԼ Է

**Մայիսի 31-ին Գառնու հեթանոսական տաճարի հնամենի ղաստերը դարձել են հայկական եւ համաշխարհային երաժշտարվեստի հանդիսման բացառիկ վայր: Ֆասթ Բանկի գլխավոր հովանավորությամբ եւ «Temple of Arts» ՀԿ նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Music Through Centuries» լայնամասշտաբ մշակութային իրադարձությունը:**

Միջոցառումը համախմբել էր արվեստասերներին. համերգին ներկա էր Ֆասթ Բանկի խորհրդի նախագահ Վահե Բադալյանը, մշակութային բազմաթիվ գործիչներ, հյուրեր արտերկրից:

Միջոցառման առանձնահատկության ու կարեւորության մասին խոսելիս Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Էդուարդ Թոփչյանն ընդգծել է, որ Վիեննան համարվում է երաժշտության համաշխարհային կենտրոնը, իսկ տեղի ֆիլհարմոնիկն աշխարհի առաջատար նվագախմբերից մեկն է. «Անչափ կարեւորում եմ նման համագործակցությունը, որ այս կարգի երաժիշտները եկել եւ նվագում են Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Ֆասթ Բանկը եւ ընդհանրապես նրա ղեկավարները, ես նկատել եմ, որ հաճախ դասական երաժշտության կողքը կանգնած են, ինչի համար ես շատ ուրախ եմ: Այսօր բարձր արվեստը եւ հատկապես այն արվեստը, որը կապված է մեծ կոլեկտիվների հետ, ոնց որ սիմֆոնիկ նվագախումբն է, այլեւս չի կարող առանց մասնավոր հովանավորների գործի»,-նշել է դիրիժորը:

Վիեննայից ժամանած ջութակահար Յոհաննես Տոմբյոկը հիացած էր Հայաստանով, տեղի հյուրընկալությամբ ու երաժշտական ժառանգությամբ, մասնավորապես՝ Արամ Խաչատրյանի արվեստով. «Սա առանձնահատուկ համագործակցություն է, մենք՝ որպես նվագախումբ, հաճախ համագործակցում ենք տարբեր նվագախմբերի հետ, օրինակ՝ Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ այլոց: Սովորաբար այն լինում է նույն մշակույթի շրջանակում՝ պարզապես տարբեր նվագախմբերի միջեւ, սակայն այս դեպքում ամեն ինչ այլ է: Մշակույթները որոշ առումներով իրար մոտ են, բայց մարդիկ միանգամայն տարբեր են»,- ասել է ջութակահարը:

Երեկոյի ամենահուզիչ եւ սպասված պահերից մեկը տարիների տեւական դադարից հետո երգչուհիներ Ինգա եւ Անուշ Արշակյանների բեմ վերադարձն էր՝ որպես միջոցառման հատուկ հյուրեր: Քույրերը կատարել են հայկական ֆոլկլորային ստեղծագործություններ սիմֆոնիկ մշակումներով, որոնք դեռեւս 2018 թվականին ձայնագրվել էին մաեստրո Թոփչյանի ղեկավարությամբ, սակայն միայն հիմա կյանքի կոչվեցին բեմում:

Երգչուհի, երգահան, միջոցառման հատուկ հյուր Ինգա Արշակյանն ասել է. «Մեզ համար մեծ պատիվ է ելույթ ունենալ Վիեննայի ֆիլհարմոնիկի երաժիշտների հետ եւ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ միասին: Հուսամ, որ սրանով իսկ նորից վերածնունդ կապրի նաեւ մեր գործունեությունն Անուշի հետ, քանի որ տարիներ շարունակ ելույթ չենք ունեցել»:

Երգչուհի, երգահան, միջոցառման հատուկ հյուր Անուշ Արշակյանն էլ ընդգծել է, որ շատ ոգեւորված են. «Մեծ պատասխանատվություն է եւ ոգեւորություն ելույթ ունենալ կրկին Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ այս անգամ Վիեննայից հրավիրյալ երաժիշտների հետ, շատ մեծ պատիվ է մեզ համար եւ շատ ոգեւորված ենք, ոգեշնչված ենք», -ասել է նա:

Աջակցելով նմանօրինակ մեծամասշտաբ նախագծերին՝ Ֆասթ Բանկը նպատակ ունի խթանել ստեղծագործական միջավայրի աշխուժացումն ու միջազգային բարձրակարգ արվեստի հասանելիությունը հայ հանդիսատեսին:

Մայրամուտի յուրօրինակ գույների, բաց երկնքի եւ տաճարի վեհության ներքո դասական երաժշտությունն ստացավ նոր շունչ՝ ներկաների համար ստեղծելով հեքիաթային եւ անմոռանալի մթնոլորտ:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

*Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից*

ՆՈՐ ՀԱՎԱԿՆՈՏ ՆԱԽԱԳԻԾ՝ «ՌԵՆՇԻՆԻՅ»

Գ

**Հայաստանի քաղաքաշինական եւ ներդրումային ոլորտի առաջատարներից մեկը՝ «Ռենշինը», նոր նախագիծ է մեկնարկում: Շուտով Թումանյան եւ Հանրապետության փողոցների խաչմերուկում՝ Երեւանում, կլինի եւս մեկ բացառիկ կառույց՝ պրեմիում դասի բազմաֆունկցիոնալ համալիր:**

Նախագիծը տեղակայված է Երեւանի փոքր կենտրոնում, ինչն ապագա բնակիչներին ընձեռում է անմիջական հասանելիություն քաղաքի լավագույն ժամանցային, կրթական եւ մշակութային կենտրոններին: Նախագծում ներառված են 100 - 200 քառակուսի մետր մակերեսով ընդարձակ բնակարաններ, պենտհաուսներ, որոնք կստեղծեն կենսամիջավայրի նոր մակարդակ: Նաեւ առկա են լինելու 30-70 քմ տարածքով ապարտհոթելներ:

Սահմանափակ թվով բնակարանները եւ ապարտհոթելների առայությունը բարձրացնում են գույքի ներդրումային գրավչությունը: Սա երաշխավորում է բարձր լիկվիդայնություն՝ ստեղծելով կայուն աճող արժեք ունեցող անշարժ գույք: Միջազգային գործընկերների հետ արդեն կայացած համագործակցությունները եւ այնպիսի նախագծերի իրագործումը, ինչպես Skyline, Artlife Kempinski Residences, Համաշխարհային առեւտրի կենտրոն Երեւանը, վստահություն են ներշնչում, որ «Ռենշինի» այս նոր նախագիծը ոչ պակաս տպավորիչ ու «խաղի կանոններ թելադրող» է լինելու: Նախագծի առավելությունը դրա գտնվելու վայրն է եւ բազմաֆունկցիոնալ ձեւաչափը՝ բնակարաններ, ապարտհոթելներ, պենտհաուսներ, ինչը հրաշալի ներդրումային հնարավորություն է ստեղծում ապագա բնակիչների ու սեփականատերերի համար: Գնորդը ձեռք է բերում ոչ թե պարզապես քառակուսի մետրեր, այլ միջազգային ստանդարտներին համապատասխանող, միջազգային լավագույն փորձի կրող պրոֆեսիոնալների թիմի կողմից ստեղծված ապրելու միջավայր:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

# ԲԱՑՎԵԼ Է «ԱԳՐՈԲՈՏ» ԿԵՆՏՐՈՆԸ

**Հայաստանի ազգային ագրարային համալսարանում տեղի է ունեցել Գյուղատնտեսական ռոբոտաշինության եւ մեխատրոնիկայի ագրարային ճարտարագիտության գերազանցության «Ագրոբոտ» կենտրոնի բացումը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Մարգիս Հայոցյանը, «Կրթական ծրագրերի կենտրոնի» (ԾԻԳ) տնօրեն Գրիշա Հովհաննիսյանը, ղեկտոնատար այլ անձինք, կենտրոնի ստեղծմանն աջակցած միջազգային կառույցների ներկայացուցիչներ եւ ոլորտի մասնագետներ: «Ագրոբոտ» գերազանցության կենտրոնը ստեղծվել է Զարգացման եւ վերակառուցման միջազգային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակում՝ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) կողմից:**

«Գյուղատնտեսական ռոբոտաշինության եւ մեխատրոնիկայի ագրարային ճարտարագիտության գերազանցության կենտրոնի ստեղծում» ծրագրի բյուջեն կազմել է ավելի քան 118 մլն դրամ: Ժամանակակից պահանջներին համապատասխանող կենտրոնը կծառայի գյուղատնտեսական ռոբոտաշինության եւ մեխատրոնիկայի կրթական ծրագրերի եւ գիտական հետազոտությունների զարգացմանը՝ նպաստելով մրցունակ մասնագետների պատրաստմանը եւ բուհաշխատաշուկա կապի ամրապնդմանը:

Ողջունելով ներկաներին՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը կարեւորել է գյուղատնտեսության զարգացմանը համահունչ կրթական միջավայրի ձեւավորումը. «Ժամանակակից գյուղատնտեսությունը, նախ եւ առաջ, տեխնոլոգիապես հագեցած տնտեսական գործունեություն է: Սա նշանակում է, որ մենք պետք է էապես վերանայենք նաեւ այդ ոլորտում կրթության կազմակերպման ձեւերն ու միջավայրը: Կարեւոր է նաեւ, որ միջավայրի հագեցվածությանը զուգահեռ վերափոխվեն կրթական ծրագրերը՝ նպաստելով բուհի զարգացմանը»: ԿԳՄՍ նախարարը հիշեցրել է, որ ակադեմիական քաղաքի շրջանակում տեխնոլոգիական կլաստերում առանձնահատուկ ներկայացվածություն պետք է ունենա նաեւ ագրարային ոլորտը. «Այսօր ստեղծված լաբորատոր ենթակառուցվածքները ցույց են տալիս, որ մենք շարժվում ենք տեխնոլոգիական զարգացման ուղղությամբ: Կարծում եմ, որ նման ծրագրերի խթանմամբ միայն հնարավոր կլինի ապահովել բարձրորակ եւ միջազգային չափանիշներին համապատասխանող մրցունակ կրթություն»:

Ժաննա Անդրեասյանը համոզմունք է հայտնել, որ նախաձեռնությունը նոր հնարավորություններ է բացելու ոչ միայն ապագա շրջանավարտների, այլեւ երկրի զարգացման համար, քանի որ այստեղ կրթված յուրաքանչյուր մասնագետ հետագայում իր ներդրումն է ունենալու ոլորտի արդիականացման եւ զարգացման գործում:

Նախարարը շնորհակալություն է հայտնել ծրագրի իրականացմանը մասնակցած բոլոր գործընկերներին՝ ընդգծելով, որ այն համատեղ եւ համակարգված աշխատանքի արդյունք է: «Նորարարությունների մրցակցային հիմնադրամի աջակցությամբ մեր տարբեր բուհերում ստեղծվել են կարեւոր ենթակառուցվածքներ, եւ սա, իհարկե, նաեւ հավելյալ պատասխանատվություն է, որովհետեւ ձեւավորված հնարավորությունները պետք է օգտագործվեն ամբողջ ներուժով»,- ասել է Ժաննա Անդրեասյանը: Նա անդրադարձել է գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների հետ համագործակցությանը՝ կարեւորելով նորաբաց կենտրոնում մասնագետների համար վերապատրաստման դասընթացների եւ ծրագրերի կազմակերպումը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Հրաչյա Զաքոյանի խոսքով՝ վերջին 7-8 տարիների ընթացքում համալսարանում ստեղծված նոր ենթակառուցվածքների թիվը հասել է շուրջ 60-ի: «Գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության բարձրացումը առաջնահերթ խնդիր է: Ժամանակակից եւ թվային տեխնոլոգիաների ներդրումը, դրանց կիրառումը գյուղատնտեսական գործընթացներում եւ բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսության ապահովումը հրատապ լուծում պահանջող հարցեր են»,- ասել է Հրաչյա Զաքոյանը՝ կարեւորելով «Ագրոբոտ» համալիրի ստեղծումը, որը հնարավորություն է տալիս գյուղատնտեսության ոլորտում կիրառելու ժամանակակից տեխնոլոգիաներ, ռոբոտատեխնիկա եւ թվային լուծումներ: ՀԱԱՀ-ում 2025 թվականի սեպտեմբերից ներդրվել է «Ագրոմեխատրոնիկա եւ ճշգրիտ ռոբոտատեխնիկա» մասնագիտական կրթական ծրագիրը: Այս մասնագիտությամբ սովորող ուսանողները ներկայացրել են մեկ տարվա ընթացքում կուտակած փորձն ու ձեռքբերումները:

Միջոցառման ընթացքում հյուրերը շրջել են «Ագրոբոտ» գերազանցության կենտրոնում հիմնված ժամանակակից AgrobotLAB եւ ITLab լաբորատորիաներում, ծանոթացել ժամանակակից ռոբոտներով եւ լաբորատոր սարքավորումներով հագեցած աշխատանքային եւ ուսումնահետազոտական լսարաններին:

Ծրագրի շահառուներն են ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի եւ բուհի քոլեջի համապատասխան մասնագիտությունների ուսանողները, դասախոսները, ասպիրանտները, հետազոտողները, ֆերմերները, գյուղատնտեսության մեքենայացման մասնագետները, ոլորտի հետազոտողները, «Արմաթ» ճարտարագիտական լաբորատորիաները եւ այլոք:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ

«Կոմոն», «Այաքսը», «Լանսն» ու «Օլիմպիակոսը» հետաքրքրված են Հայաստանի ազգային հավաքականի պաշտպան Նաիր Թիկնիզյանի ծառայություններով: Այս մասին X-ի իր միկրոբլոգում հայտնում է հայտնի լրագրող Էքրեմ Քոնուրը: Աղբյուրի փոխանցմամբ՝ սերբական ակումբի համար շատ բարդ կլինի դիմանալ նման հեղինակավոր հավակնորդների մրցակցությանը եւ պահել հայ ֆուտբոլիստին: Թիկնիզյանի գործող պայմանագիրը «Ցրվենա Զվեզդայի» հետ նախատեսված է մինչեւ 2028 թվականի հունիսի 30-ը: Հիշեցնենք, որ Թիկնիզյանը բելգրադյան թիմում հանդես է գալիս 2025 թվականի ամառվանից: Ավարտված ցրաշրջանում նա բոլոր մրցաշարերում անցկացրել է 47 հանդիպում՝ դառնալով 1 գոլի եւ 7 գոլային փոխանցման հեղինակ: Ըստ հեղինակավոր Transfermarkt պորտալի՝ 27-ամյա պաշտպանին տրանսֆերային արժեքը ներկայումս կազմում է 7 միլիոն եվրո:

## ՄՈՈՒՐԻՆՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Պորտուգալացի հայտնի մասնագետ Ժոզե Մոուրինյուն պաշտոնապես հաստատել է, որ շուտով կգլխավորի Մադրիդի «Ռեալը»: Դա հայտնի դարձավ այն բանից հետո, երբ 79-ամյա Ֆլորենտինո Պերեսը հաղթանակ տարավ ակումբի նախագահական ընտրություններում: Նախապես խոստացվածի պես Պերեսի հաղթանակի դեպքում «արքայական» ակումբի ղեկը պետք է ստանձներ հենց պորտուգալացին: Արձագանքելով ընտրությունների արդյունքներին՝ Մոուրինյուն հաստատել է շրջանառվող լուրերը. «Այո, Ֆլորենտինո Պերեսը հաղթեց: Եվ իհարկե, ես կլինեմ «Ռեալի» մարզիչը»,- Մոուրինյուի խոսքերն է մեջբերում հայտնի ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն եւ Madrid Universal-ը: Ակնկալվում է, որ մոտ ժամանակներս Մոուրինյուն կլքի Լիսաբոնի «Բենֆիկան» եւ պաշտոնապես կնշանակվի «սերուցքայինների» գլխավոր մարզիչ: Հիշեցնենք, որ «Հատուկը» արդեն գլխավորել է մադրիդյան գրանդը 2010-ից 2013թթ.: «Ռեալի» երկրպագուներին եւս մեկ անակնկալ է սպասվում. Մոուրինյուի հետ Մադրիդ կվերադառնա ակումբի լեգենդար նախկին պաշտպան Պեպեն: Ըստ լրագրող Ռամոն Ալվարես դե Մոնի տեղեկությունների՝ 43-ամյա պորտուգալացին, ով խաղակոշիկները կախել է մեխից ընդամենը երկու տարի առաջ, կդառնա Մոուրինյուի օգնականներից մեկը: Հիշեցնենք, որ Պեպեն հանդես է եկել «Ռեալում» 2007-ից 2017թթ.՝ դառնալով ակումբի պատմության ամենանշանավոր պաշտպաններից մեկը, իսկ նրա կարիերայի վերջին կանգառը եղել է պորտուգալական «Պորտուն»: Բացի նոր մարզչական շտաբից, հայտնի է դարձել նաեւ նոր համալրումների մասին: Վերընտրված նախագահ Ֆլորենտինո Պերեսն արդեն իսկ հայտարարել է պաշտպանության գծի ամրապնդմանն ուղղված երկու կարեւոր տրանսֆերի մասին՝ Իբրահիմա Կոնատե («Լիվերպուլ») եւ Դենզել Դումֆրիս (Միլանի «Ինտեր»): Այս փոփոխությունները խոստանում են նոր շունչ հաղորդել մադրիդյան թիմին՝ նպատակ ունենալով վերադարձնել կորցրած տիտղոսներն արդեն գալիք մրցաշրջանում:

ՓԱՅՏՅԱ ՔԱՆԴԱԿ-ՆՍՏԱՐԱՆ

**Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի հուշային այգում տեղի է ունեցել ֆրանսահայ անվանի քանդակագործ Հարություն Եկմալյանի հեղինակած՝ Ռիալտոյի կամրջի տեսքով փայտյա քանդակ-նստարանի պաշտոնական բացման արարողությունը: Նախաձեռնությունը դեռեւս այս տարվա գարնանը Վենետիկում Ավետիք Իսահակյանի հուշատախտակի բացմամբ սկսված մշակութային երկխոսության շարունակությունն է:**

Հիշեցնենք՝ հայ մեծանուն գրող Ավետիք Իսահակյանի 150-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում ապրիլի 17-ին Վենետիկում՝ Դորսոդուրո N2266 հասցեում գտնվող տանը, որտեղ ապրել է մեծ գրողը, բացվել է վարպետին նվիրված հուշատախտակ, որի վրա պատկերված են Ռիալտոյի կամրջի էսքիզը եւ Իսահակյանի սիրելի ճարտարապետական կառույցից՝ Երերույքի տաճարից զարդանախշ: Հուշատախտակի բացվել է ԿԳՄՍ, ինչպես նաեւ Արտաքին գործերի նախարարությունների ջանքերով՝ Վենետիկի հյուպատոսարանի աջակցությամբ եւ Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի կազմակերպմամբ: Այժմ արդեն Ռիալտոյի կամրջի տեսքով փայտյա քանդակ-նստարան է տեղադրվել նաեւ Երեւանում՝ Վարպետի տանը՝ Իսահակյանի տուն-թանգարանի, Երեւանի բազմամասնագիտական պետական քոլեջի եւ քանդակագործ Հարութ Եկմալյանի հետ համագործակցությամբ: Փայտի մշակման եւ պատրաստման աշխատանքներին մասնակցել են քոլեջի ուսանողները՝ վարպետ-դասախոս Վարդան Հարությունյանի ղեկավարմամբ:

«Փարիզում բնակվող հայտնի քանդակագործ Հարութ Եկմալյանն արդեն իսկ Ռեալտոյի կամրջի պատկերով հրաշալի ստեղծագործություն էր ներկայացրել, եւ մենք խնդրեցինք վարպետին, որպեսզի այն տեղափոխվի նաեւ Երեւան: Գաղափարի շուրջ քննարկումների արդյունքում ծնվեց համատեղ նոր նախագիծը: Նստարանի վրա փորագրված է Ավետիք Իսահակյանի հայտնի «Մի մրահոն աղջիկ տեսա Ռիալտոյի կամուրջին...» բանաստեղծությունը՝ հայերեն եւ իտալերեն, Ռիալտոյի կամրջին համադրվում է նաեւ աղջկա դեմքի քանդակը, որը յուրօրինակ կերպով արտահայտում է բանաստեղծությունը:

Ուսանողների, վարպետների ձեռամբ կյանքի կոչված այս նախաձեռնությունը շատ խորհրդանշական է մեզ համար: Վարպետի տուն եկող այցելուներից շատերը մշտապես հարցնում էին՝ «Իսկ Ռեալտոյի կամուրջից ի՞նչ ունեք»: Հիմա մենք արդեն ունենք Ռիալտոյի կամրջի տեսքով փայտյա քանդակ-նստարան, որտեղ մեր թանգարանի այցելուները կարող են նստել եւ ընթերցել Վարպետի բանաստեղծությունները, լուսանկարվել՝ վայելելով իսահակյանական ոգով եւ լիցքերով լեցուն այս գեղեցիկ միջավայրը»,- ներկայացնելով կատարված աշխատանքը՝ նշել է Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի տնօրեն Արմենուհի Ավետիսյանը:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ նախագծի հեղինակ, անվանի քանդակագործ Հարություն Եկմալյանը, ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտին, Երեւանի բազմամասնագիտական պետական քոլեջի տնօրեն Աննա Սաղաթելյանը, Վարպետի թոռը՝ Ավիկ Իսահակյանը, ընտանիքի անդամները, մտավորականներ, արվեստագետներ: Միջոցառման ընթացքում ներկաները դիտել են նաեւ «Իսահակյանը եւ Վենետիկը» խորագրով տեսանյութը, հնչել են իտալերեն եւ հայերեն երգեր՝ Իսահակյանի բանաստեղծությունների բառերով:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 13-ին՝ ժամը 16:00-ին, կկայանա «Անխելք մարդը» ներկայացումը:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Հարկադիր կատարման ենթակա ակտերն ի՞նչ ժամկետում կարող են ներկայացվել հարկադիր կատարման:**

*Վահան Գրիգորյան, 45 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

● 1. Պահանջատերը կարող է հարկադիր կատարման դիմում ներկայացնել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ՝

1) օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը, բայց օրենքով անհապաղ կատարում չենթադրող եզրափակիչ դատական ակտի դեպքում՝ ոչ շուտ, քան այդ ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետը լրանալը.

2) օրինական ուժի մեջ է մտել սույն օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավասու դատարանի դատական ակտը, եթե իրավասու դատարանը հարկադիր կատարման դիմում չի ներկայացրել.

3) լրացել է կատարման ենթակա ակտի կատարումը հետաձգելու կամ դրա կամավոր կատարման՝ օրենքով նախատեսված կարգով սահմանված ժամկետը.

4) օրինական ուժի մեջ է մտել (պարտադիր է դարձել) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային կազմակերպության (դրա մարմնի) որոշումը, եթե այդ միջազգային պայմանագրով կամ դրա հիման վրա ընդունված՝ միջազգային կազմակերպության (դրա մարմնի) որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ.

5) նոտարական ակտը պարտադիր է դարձել կողմերի համար.

6) դատարանը որոշում է կայացրել կատարողական վաղեմության ժամկետը վերականգնելու մասին.

7) կատարողական վարույթն ավարտվել է սույն օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

● 2. Վարչական ակտի կամ դատախազի որոշման հարկադիր կատարման դիմում կարող է ներկայացվել այն օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում, երբ տվյալ ակտը՝

1) օրենքի հիման վրա համարվում է անհապաղ կատարման ենթակա.

2) դարձել է կատարման ենթակա՝ ուժի մեջ մտնելու, պարտադիր դառնալու, բողոքարկման ժամկետը լրանալու, անբողոքարկելի դառնալու, վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգման կամ տարաժամկետման ժամկետը լրանալու, օրենքով սահմանված ժամկետում բողոքարկման դեպքում՝ վերջնականապես հաստատվելու կամ օրենքով սահմանված այլ իրադարձության հիմքով, ընդ որում՝ օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում կատարողական վաղեմության ժամկետի սկիզբ է համարվում նշվածներից առավել ուշ տեղի ունեցած իրադարձության օրը:

*(Շարունակությունը՝ հաջորդ համարում)*

***Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն***

*Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ի՞նչ առաջադրանքներ են ընդգրկվում բաղամասային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստում:**

*Գալուստ Համբարձումյան, 47 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մրցույթի թեստերում ընդգրկվում են մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքներ: Թեստը բաղկացած է 50 թեստային առաջադրանքից: Մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, տվյալ ոլորտը եւ քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթների իրականացումը կանոնակարգող սահմանադրական օրենքներից, օրենքներից, օրենսգրքերից եւ տվյալ պաշտոնի գործառույթների իրականացման համար հենք հանդիսացող բազային գիտելիքների շրջանակից՝ հիմք ընդունելով տվյալ մարմնի գործունեության հիմնական ոլորտները եւ տվյալ պաշտոնի առանձնահատկությունները, իսկ կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմվում են՝ հիմք ընդունելով տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված ընդհանրական եւ ընտրանքային կոմպետենցիաները:

***Քաղաքացիական ծառայության գրասենյակ***

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի*

Ողբերգական ավտովթար Սյունիքում. «Jeep Compass»-ը Տաթեւի վանքի մոտ դուրս է եկել երթեւեկելի գոտուց, մոտ 200 մետր գլորվելով՝ գլխիվայր հայտնվել անտառում: 4 զոհերն ու վիրավորը Կապանի փոխքաղաքապետի ազգականներն են:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| | Շիրակ | + 5 + 9<br>+ 16 + 21 |
| | Կոտայքի լեռներ | + 5 + 8<br>+ 16 + 20 |
| | Կոտայքի նախալեռներ | + 12 + 15<br>+ 22 + 25 |
| | Գեղարքունիք | + 6 + 10<br>+ 15 + 20 |
| | Լոռի | + 6 + 10<br>+ 19 + 23 |
| | Տավուշ | + 6 + 9<br>+ 20 + 23 |
| | Արագածոտնի լեռներ | + 5 + 8<br>+ 16 + 20 |
| | Արագածոտնի նախալեռներ | + 10 + 15<br>+ 22 + 27 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | + 13 + 16<br>+ 25 + 28 |
| | Արմավիր | + 14 + 17<br>+ 26 + 29 |
| | Վայոց ձորի լեռներ | + 6 + 9<br>+ 16 + 20 |
| | Վայոց ձորի նախալեռներ | + 14 + 18<br>+ 26 + 29 |
| | Սյունիքի լեռներ | + 6 + 9<br>+ 14 + 17 |
| | Սյունիքի նախալեռներ | + 6 + 14<br>+ 18 + 22 |
| | Սյունիքի հովիտներ | + 15 + 18<br>+ 25 + 28 |
| | Երեւան | + 15 + 17<br>+ 27 + 29 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **08.06.2026**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*